

Դուք ալ այսպէս պիտի մտածէիք՝ եթէ ականատես ըլլայիք այն իրարանցումին, որով քանի մը տնօրէններ թաղէ թաղ կ'պտըտին այս օրերս, աղուոր դերասանուհիներ փնտռելու համար:

Եւ այս եղանակաւ կարելի՞ է միթէ ծաղկեցնել հայ թատրոնն, ուր դերասանուհիներն ազգային են եւ ներկայացումներն օտար:

Միջազգիտի Բարեսիրաց Ընկերութիւնն կ'պատրաստուի ներկայացումներ տալու քանի մը օրէն. առաջին ներկայացումն պիտի ըլլայ Նէլլի աշտարակն, գեղեցիկ *պիեսա* եօթը պատկերով, որուն մէջ դեր պիտի ունենայ տիկին Հրաչեայ, գեղեցկագոյն *պիեսա* մէկ պատկերով: Հանդիսականներուն հարիւրին իննըսունեւինը մէկ պատկերը տեսնելու կ'երթան եւ հարիւրին մէկը՝ եօթը պատկերը տեսնելու: Իննըսունեւինը հոգի շատ չէ՞ մէկ պատկերի համար. մէկ հոգի քիչ չէ՞ եօթը պատկերի համար:

Ուրիշ կէտ մ'ալ կայ:

Այդ մէկ հոգին ի՞նչ օգուտ պիտի քաղէ այդ ներկայացումէն, որ բնաւ ազգային կեանք չ'պարունակեր իւր մէջ:

Ո՞ր էք, ինքզինքնիդ բանաստեղծ, փիլիսոփայ կարծող պարոններ. ինչո՞ւ ազգային կեանքին վերաբերեալ թատրերգութիւններ չէք գրեր ազգային թատրոնը ծաղկեցնելու համար, ժողովրդեան վարքն ու բարքն ուղղելու համար: Եթէ կը վախնաք, որ ձեր հեղինակութիւններն յարգ եւ պատիւ չեն գտներ՝ կսխալիք. քաջալերուեցէ՛ք, ո՛վ վախկոտ հեղինակացուներ. գեղեցիկ դերասանուհի մը կ'ծածկէ ձեր թատրերգութիւններուն տգեղութիւնները. օն անդր, սիրտ առէք եւ ջանացէք սիրուն դերասանուհիներով փայլեցնել ձեր հնացեալ հեղինակութիւնները...:

5 Նոյեմբեր

Շնորհաւոր նոր վարչութիւն եւ բարի սահմանադրութիւն: Նոր վարչութիւնն, որ չորս ամիսներէ ի վեր կ'ազմուելու վրայ էր՝ վերջապէս կ'ազմուեցաւ շնորհիւ Աստուծոյ:

Տար Աստուած, որ թղթակազմ չըլլար եւ քանիմ' օրէն չ'պատռուէր:

Հայրենիք հետեւեալ կերպով կ'շարէ նոր վարչութեան անձերը.

Գերապատիւ Տ. Մաթեոս եպիսկոպոս՝ կրօնական գործոց խորհրդական.

Մեծ. Միքայէլ Էֆ. Մոմճեան՝ յարաբերական գործոց խորհրդական.

Մեծ. Տիգրան Էֆ. Եուսուֆեան՝ ներքին գործոց խորհրդական.